ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ

11 դեկտեմբերի 2013 թ. N 65 -Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2014Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ 17-Ը ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2004թ. հունվարի 25-ի թիվ 59 որոշման 1-ին կետի պահանջներով, ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2013թ. դեկտեմբերի 4-ի թիվ 01/15/6657-13 հանձնարարականի՝ մարզի վիճակագրական մարմիններին աջակցություն ցուցաբերելու նպատակով

կ ա ր գ ա դ ր ու մ եմ

1. Ստեղծել անասուների համատարած հաշվառման աշխատանքները կազմակերպող և անցկացնող համատեղ հանձնաժողով հետևյալ կազմով.

Վ.Սուքոյան	-	հանձնաժողովի նախագահ, մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Ա.Աչինյան	-	ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության Տավուշի մարզային վարչության պետ
Գ.Փայտյան	-	Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ
Վ.Աբրահամյան	-	ՀՀ ԳՆ <<Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների Տավուշի մարզային կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն
Ժ.Թամրազյան	-	ՀՀ ԱՎԾ Տավուշի մարզային գործակալության ամփոփ և տարածքային վիճակագրական բաժնի գլխավոր մասնագետ
Գ.Վիրաբյան	-	ՀՀ ԱՎԾ Տավուշի մարզային գործակալության ամփոփ և տարածքային վիճակագրական բաժնի գլխավոր մասնագետ
Ժ.Խաչատրյան	-	ՀՀ ԱՎԾ Տավուշի մարզային գործակալության ամփոփ և տարածքային վիճակագրական բաժնի 1-ին կարգի մասնագետ
Ե.Քոչարյան	-	ՀՀ ԱՎԾ Տավուշի մարզային գործակալության ամփոփ և տարածքային վիճակագրական բաժնի գլխավոր մասնագետ

2. Հանձնարարել հանձնաժողովին /նախագահ Վ.Սուքոյան/ մինչև 2014թ. հունվարի 17-ը մարզում անցկացնել անասունների հաշվառում և արդյունքների մասին տեղեկատվություն ներկայացնել մարզպետին:
3. Համայնքների ղեկավարներին՝ ստեղծել անասունների համատարած հաշվառում անցկացնող տեղական հանձնաժողովներ՝ ընդգրկելով համայնքների անասնաբույժներին:
4. Կարգադրության կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վ.Սուքոյանի վրա:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

2013թ. դեկտեմբերի 11
Իջևան